ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. հունվարի 17 թիվ 5 -Ա

ՀԱՅԿԱՐԱՄ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ հոդվածի 2-րդ մասի և 162-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի <<Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին>> թիվ 1384-Ն որոշումը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հայկարամ Պողոսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ՝ 2011 թվականի փետրվարի 26-ից 2012 թվականի փետրվարի 26-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 24 աշխատանքային օր տևողությամբ, 2012 թվականի հունվարի 17-ից փետրվարի 17-ը ներառյալ:

Հիմք՝ Հ. Պողոսյանի 2012 թվականի հունվարի 17-ի դիմումը:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի համաձայն վճարել նաև լրացուցիչ արձակուրդային վճար՝ ամսական միջին աշխատավարձի չափով:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ